կցութիւնք, անվաւեր ամուսնութիւնք, թէպէտ և կնքեալք Խաչիւ և Աւետարանաւ, թող զայլ հետևանս և զարդիւնս յուսահատութեան, որ մղէ զսիրահարս։

Միանգամ ընդ միշտ առ ի վերջ տալ այսօրինակ անախորժութեանց և դժբախտութեանց, ևս առաւել ի նկատ առեալ Մեր զհանդամանս ժամանակի զէթ յաղագս ազգիս, մանաւանդ զներոդ ոգին Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ, որ յամենայն նեղութեան ժամանակի զիջեալ է ինչ ինչ ներողութեամբ, Մեք որպէս Հայրապետ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ, Հայր և պահապան հարազատից նոյն Եկեղեցւոյ՝ զաւակաց ս. Հօրն մերոյ Լուսաւորչի, սովին կոնդակաւ առաջադրեմք Սինոդիդ պատուիրելով յետ այսու անպայման թոյլատրել յօրագիրս դորին զեօթներորդ աստիճանի ազգակցական չհասութիւնս, քանզի այսպէս է պահանջ ժամանակի։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝
ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց.

յ17 Դեկտ. 1899 ամի
և ըստ Տոմարիս ՌՃԾ.
ի Հայրապետութեան Մերում Է. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Թ. 1490.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝

ՍԻՆՕԴԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Յայտնի է Մեզ եթէ պսակք՝ կատարեալք ի վեցերորդ աստիճանի ազգակցութեան և ի չորրորդ աստիճանի խնամութեան, անվաւերք համարին ի Սինոդէդ և պսակեալքն որպէս և պսակադիրքն յանձնին ի դատ մարմնաւոր իշխանութեան։

Ի նկատ առեալ Մեր զՍ. Գիրս (Ղևտ. 18) և զկանոնս եկեղեցւոյ սրբոյ՝ Մեք իբրև Հայրապետ Ամենայն Հայոց, այսու Կոնդակաւ Մերով կանոնադրեմք ի վարիլ Սինոդիդ յետ այսու ըստ յետագայ հրահանգաց.

Ա. Անվաւերք համարեսցին պսակք կատարեալք մինչ ցՀինգերորդ աստիճան ազգակցութեան և ցչորրորդ աստիճան խնամութեան։

Բ. Անթոյլատրելի համարեսցին պսակք հինգերորդ և վեցերորդ աստիճանաց ազգակցութեանց և չորրորդ աստիճանի խնամութեանց։ Բայց ի դէպս պատահմանց՝ յորժամ յայտնեսցի եթէ կատարեալք են պսակք ի յիշատակեալ անթոյլատրելի աստիճանս, պսակքն համարեսցին վաւերականք, իսկ պսակադիր քահանայն և պսակեալքն ենթարկեսցին խիստ ապաշխարանաց ըստ այսմ. ա) Զրկեսցի իսպառ ի քահանայագործութենէ քահանայն՝ որ համարձակեսցի պսակ դնել ի չորրորդ աստիճանի ազգականութեան. բացառութիւնք համարեսցին պատիժք, երբ յետ խիստ քննութեան երևեսցի, զի անգիտակցաբար է կատարեալ պսակն և պսակադիրն վասն անզգուշութեանն ենթարկեսցի միամեայ ապաշխարանաց ի միում վանօրէից մերոց, սակայն յերկուս դէպս ևս (գիտակցաբար և անգիտակցաբար) պսակն անվաւեր համարեսցի։

Բ) Քահանայն՝ որ գիտակցաբար դնէ պսակ ի հինգերորդ աստիճանի ազգականութեան, ենթարկեսցի եռամեայ դադարման ի քահանայագործութենէ և առաքեսցի յապաշխարութիւն ի վանօրայս, ի դէպս անգիտութեան՝ վեցամսեայ ապաշխարանաց։ Զնոյն ապաշխարանաց կրեսցեն զպատիժ նաև պսակեալք՝ միայն ի տեղական եկեղեցւոջ վեցամսեայ ժամանակաւ։

Գ) Պսակադիրն՝ վեցերորդ աստիճանի ազգականութեան ենթարկեսցի մի և կէս ամեայ ապաշխարութեան ի վանօրայս. ի դէպս անգիտութեան՝ եռամսեայ ժամանակաւ. իսկ պսակեալքն նոյն չափով յեկեղեցիս իւրեանց։

Եւ դ) Վասն կատարողաց զպսակս չորրորդ աստիճանի

խնամութեանց՝ ենթարկեսցի ապաշխարութեան ըստ ցուցման գ) յօդուածոյն։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Կաթողիկոս Ամենայն Հայոց.

Ի 4 Յունուարի 1902 ամի
և ըստ Տոմարիս ՌՅԾԱ.
ի Հայրապետութեան մերում Թ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Թ. 4.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ ԷՋՄԻԱԾՆԻ. Շնորհունակ Միաբանի Մայր Աթոռոյս Գալստի Տ. Մկրտչեան Հայրապետական օրհնութեամբ յայս առնեմք։

Յամին 1897 *Կոնդակաւ մերով նշանակեցաք խմբագիր «Արարատ» ամսաթերթի Մայր Աթոռոյս զՏ. Կարապետ վարդապետն՝ տեսուչն հոգևոր ճեմարանիս, որ յօրէ անտի ցարդ իբրև խմբագիր և իբրև գլխաւոր վարիչ կատարէ զիւրն պաշտօն։ Սակայն զդացեալ Մեր զծանրութիւն պաշտաման նորա ի ճեմարանի և արտաքոյ յայլ պաշտամունս՝ Մեք բարւոք համարեցաք ազատ կացուցանել զնա ի պաշտամանէ խմբագրութեան «Արարատի»։*

Եւ քանզի ի սկզբանէ ցարդ աշխատակցեալ կաս նոյն ամսաթերթին գիտական, պատմական, քննադատական և այլ պիտանի և օգտակար յօդուածովք և ծանօթք են Քեզ ամենայն հանդամանք կազմութեան և պատրաստութեան թերթին, Մեք արժան համարիմք սովին Հայրապետական Կոնդակաւ կարգել զՔեզ խմբագիր «Արարատ» ամսագրոյ Մայր Աթոռոյս ի 1-*էն յառաջիկայ Յունուար ամսոյ, հաւատի դոլով միանդամայն՝ եթէ հաճելի է այն պաշտօն Քեզ և Դու՝ որպէս ցարդ իբրև աշխատակից նախանձաւոր*